«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առարկան՝ Մայրենի

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Աղաջանյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները

- 1. Ներածություն……..3
- 2. ԳԼՈՒԽ 1……5
  Գրաճանաչության նախաայբբենական շրջանի նշանակությունը կարդալու և գրելու ուսուցման համար
- 3. ԳԼՈՒԽ 2 ……12
  Գրաճանաչության նախաայբբենական շրջանի կազմակերպման դժվարությունները
- 4. ԳԼՈՒԽ 3……16
  Գրաճանաչության հնչյունային մեթոդի պատմական հիմքերը և արդի պրակտիկան
- 5.Եզրակացություն……21
- 6.Գրականության ցանկ……23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոց ընդունվելը բեկումնային պահ է երեխայի կյանքում, անցում նոր սոցիալական պայմանների ու գործունեության ձևերի, հետևաբար պահանջում է դպրոցական ուսուցմանը երեխաների նախապատրաստման անհրաժեշտություն:

Երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման նպատակը զարգացման բարենպաստ միջավայրի ապահովումն է, որտեղ ըստ ամենայնի կբացահայտվեն և կդրսևորվեն նրա ներքին հնարավորություններն ու կարողությունները, կզարգանան երեխայի հոգեկան, սոցիալական, ֆիզիկական կարողությունները, ինչն էլ կապահովի երեխայի հաջող մուտքն ու ուսումնառությունը դպրոցում, դպրոցական կյանքին նրա ադապտացիան:

Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ խիստ կարևոր նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը: Հայտնի է, որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթարկվում, երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին: Երեխայի խոսքի զարգացումը լեզվական հաղորդակցումն ու փոխազդեցությունն իր անմիջական միջավայրի շրջապատի հետ հասակակիցների և մեծահասակների հետ համատեղ գործունեությունը նրա զարգացման ամենակարևոր գրավականներն են: Հասարակության մեջ իր տեղը գտնելու համար մարդը պետք է արդյունավետ հաղորդակցվել սովորի: Երեխան նախ շփվում է ծնողների հետ, այնուհետև նաև այլ մարդկանց, սովորում է հաղորդակցվել համատեղ գործունեության ընթացքում: Այդ գործունեությունը կարող է լինել խաղուսում իր ուժերի չափով աշխատանք: Այդ ընթացքում երեխան յուրացնում է իր միջավայրի սոցիալական փորձը հասկանում է թե ինչը ինչպես է արվում, սովորում է վարքի ու գործունեության նորմերն ու կանոնները այսինքն՝ հասկանում է թե ինչ կարելի է անել իսկ ինչ՝ ոչ, ում հետ ինչպես կարելի է վարվել, որտեղ իրեն ինչպես պիտի պահի և այլն: Իր շրջապատի սոցիալական նորմերի յուրացման այս գործընթացն էլ հենց սոցիալականացումն է: Երեխայի

վաղ սոցիալականացման ամենակարևոր կողմերից մեկը նրա հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է:

Հետազոտության նպատակն է գրաճանաչության նախաայբենական շրջանի կարևորումը և դրա իրականացման մեթոդական արդյունավետ հնարների առաջադրումը:

Հետազոտության առարկան աշակերտների գրաճանաչության կազմակերպման գործընթացն է իր մեթոդաբանական հիմքով, ուսուցիչների պրակտիկ կարողություններով և աշակերտների աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակադրումով, այդ գործընթացում ակնհայտ դժվարություններով դրանց կանխմանը միտված հոգեբանամանկավարժական սկզբունքային մոտեցումներով :

ԳԼՈՒԽ 1

Գրաճանաչության նախապատրաստական շրջանի նշանակությունը կարդալու և գրելու ուսուցման համար

Նախադպրոցական տարիքի շրջանում երեխան ձեռք է բերում մայրենի լեզվին տիրապետելու հմտությունները: Երեխան մայրենի լեզվի բանավոր խոսքին տիրապետում է կյանքի առաջին մի քանի տարիներին: Նախադպրոցական հաստատության խնդիրն է զարգացնել երեխայի խոսքը: Խոսքի զարգացման ընթացքում շրջապատի հետ շփման արդյունքում ձևավորվում են երեխայի խոսքային հաղորդակցական ունակությունները զարգանում է նրա բանավոր խոսքը: Խոսքի զարգացումը հոգեկան բարձր իմացական գործընթաց է և սերտորեն կապված է մտածողության հետ: Խոսքն ունի զարգացման իր փուլերը, որոնք ընթանում են ըստ երեխայի տարիքային առանձնահատկությունների: Եթե երեխաները մեծանում են այնպիսի միջավայրում, որտեղ կարդում ու գրում են, ապա նրանք այդ մասին բավական բան են սովորում իրենց առաջին ուսուցչին հանդիպելուց տարիներ առաջ: Նրանք իրենց համար բացահայտում են լեզվական կառուցվածքների իմաստը, սովորում են այն հմտորեն կիրառել: Մանկապարտեզում և տանը մեծ աշխատանք պետք է տանել՝ նախապատրաստելու համար երեխաներին գրելու ու կար դալու լավ մեկնարկին: Այս ամբողջ գործընթացը անվանում են վաղ կամ նախնական գրաճանաչություն

- երեխայի փորձառության մեջ մի փուլ է, որն սկսվում է այն ժամանակ, երբ երեխան առա ջին անգամ տեսնում է գիրքը և զարմանում թե մարդիկ ինչպես են օգտվում դրանից և ավարտվում է այն ժամանակ, երբ երեխան կարողանում է ինքնուրույն կարդալ բառերը:
- վաղ ֆորմալ և ոչ ֆորմալ ուսուցում ,որը երեխան սկսում է ստանալ տանը կամ մանկապարտեզում և հասկանում թե ինչ է կարդալն ու գրելը և ինչին են դրանք ծառայում: Քանի որ տպագիր խոսքը ներկայացնում է այն լեզուն, որով խոսում են երեխաները, նրանք պետք է հասկանան տպագիր խոսքի լեզուն և ըմբռնեն այդ լեզուն ներկայացնող տպագիր խոսքի առանձնահատկությունները :

Նախնական գրաճանաչությունը ենթադրում է որ

գրաճանաչության զարգացումը տեղի է ունենում երեխայի ներսում: Այն նաև ենթադրում է, որ այս գործընթացն աստիճանական է և որոշակի ժամանակ է պահանջում: Ահա թե որոնք են նախնական գրաճանաչության ձևավորման գործընթացի բաղադրիչները:

- Կարդալ և գրել սովորելը սկսվում է կյանքի շատ վաղ շրջանում: Երեխաները, որպես կանոն շատ վաղ են շփվում գրավոր լեզվի հետ: Տանը ,նրանց համար գրքեր են կարդում նրանք տանը և դրսում տեսնում են ,ամենատարբեր ցուցանակներ պիտակներ և պատկերանիշեր Վաղ տարիքում երեխաները փորձում են նաև գրել `«խզբզել»:
- Կարդալն ու գրելը վաղ տարիքում զարգանում են միաժամանակ և փոխկապակցված: Երեխաները չեն սովորում նախ՝ կարդալ, իսկ հետո՝ գրել: Իրականում գրելը՝ որպես վաղ ուսումնական գործունեություն , երեխաների համար ավելի հեշտ է քան կարդալը:
- Գրաճանաչությունը, զարգանում է իրական կյանքի իրավիճակներում, որտեղ կարդալն ու գրելը ծառայում են որոշակի գործողություններին:
- Երեխաները գրաճանաչություն են սովորում ակտիվ ներգրավվելով ,որոշակի գործունեության մեջ օրինակ՝ իրենց սիրելի «պատմություններն ընթերցելու» միջոցով: Երբ երեխան «մատը սահեցնելով» գրքի տողերի վրայով ,վերընթերցում է իր սիրելի գիրքը, նա անգիր չի կրկնում մտապահված տեքստը այլ ավելի շուտ վերակառուցում է գրքի բովանդակությունը: Կամ երեխաները հաճախ ձևացնում են, թե գրում են: Գրելու այդ նմանակումը մի ձև է՝ տեսնելու ,այն հնչյունների տարրերը, որոնք ծանոթ են երեխային:

- Երեխաների համար կարդալը հատուկ դեր է խաղում վաղ գրաճանաչության զարգացման համար: Լսելով, թե ինչպես է հնչում տպագիր խոսքը՝ երեխաները ձեռք են բերում գրավոր խոսքի օրինաչափությունների ընթացքի և բնույթի զգացողություն: Երեխաներն ընդհանուր պատկերացում են կազմում այն մասին թե ինչ բան է կարդալը և ինչի է այն նման: Նրանց մոտ ձևավորվում է դրական վերաբերմունք կարդալու նկատմամբ ինչը սովորելու հզոր դրդապատճառ է դառնում, երբ երեխան գնում է դպրոց Դա նաև երեխաների մոտ գրքի տպագիր տեքստի և կարդալու մասին հասկացությունների ձևավորման կարևոր միջոց է :

Վաղ տարիքում երբ երեխաների համար գրքեր են կարդում նրանք սովորում են, թե, ինչպես են մարդիկ կարդում, որ գրված նշանները կարելի է «խոսեցնել», և աստիճանաբար իրենք էլ սկսում են նմանակել նման վարքը: Աստիճանաբար նրանք սովորում են ինչպես պահել գիրքը թերթել, էջերը նայել նկարները՝պատմությունը հասկանալու համար:

Հետո երեխաները սկսում են նկատել տարբերությունը նկարների և նշանների՝ տառերի միջև: Նրանք սովորում են, որ այդ նշաններն «իմաստ» ունեն: Նրանք նաև փորձում են իբր թե ընթերցել ՝ մատը սահեցնելով տողերի վրայով: Հետո երեխաները սովորում են իրենց շրջապատում ճանաչել առանձին բառեր և կարողանում են ասել թե ինչ են դրանք նշանակում: Ավելի ուշ նրանք սովորում են այբուբենի տառերն ու հնչյունները և դառնում են ինքնուրույն ընթերցողներ:

Այս շրջանում տարվող աշխատանքների համակարգում ,առանձնահատուկ տեղ են գրավում նաև ուսումնական հարցերը, որովհետև գրաճանաչության ուսուցման համար աշակերտները նաև որոշակի լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքներ պետք է ունենան, տեսականորեն ու գործնականորեն պետք է նախապատրաստվեն կարդալու և գրելու մտավոր գործողությունների կատարմանը, որոշակի կարողություններ պետք է ձեռք բերեն այդ ուղղությամբ:

Լեզվական նախագիտելիքների ուսացումը

անհրաժեշտություն է և դրա վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել: Գրաճանաչության ուսուցման ընթացքում գրեթե ամեն օր ու ամեն դասի խոսք է լինում նախադասության բառի վանկի միավանկ ու բազմավանկ բառերի հնչյունի ձայնավոր ու բաղաձայն հնչյունների տառի մեծատառի ու փոքրատառի տպագիր ու ձեռագիր տառերի և այլ լեզվական հասկացությունների մասին, որոնք անկասկած երեխաների համար պետք է հասկանալի լինեն: Լեզվական այդ հասկացությունների մասին երեխաները գաղափար պետք է կազմեն նախապատրաստական շրջանում:

«Այբբենարան»- ում տրված թեմատիկ առարկայական և բառ նկարների օգնությամբ երեխաներին գաղափար ենք տալիս խոսքի կամ ամբողջական պատմության, նախադասության ու բառերի մասին այդ լեզվական անվանումները կապելով կոնկրետ հասկացությունների յուրացման հետ, որպեսզի դրանցից յուրաքանչյուրը որոշակի բովանդակություն ու իմաստ ստանա և հեշտությամբ մտապահվի: Առանձնապես օգտակար են նախադասությունները բառերի բաժանելու, առաջադրված բառերով նախադասություններ կազմելու ինքնուրույն կերպով նախադասություններ ու բառեր ասելու վարժությունները:

Բառի մասին հասկացություն տալուց հետո՝ գաղափար պետք է տալ նաև վանկի՝ բառի արտասանական միավորների կամ մասերի վերաբերյալ: Այս կապակցությամբ էլ երեխաները կծանոթանան միավանկ և բազմավանկ բառ հասկացություններին:

Վանկից անցում է կատարվում հնչյունին, որպեսզի հետագայում բոլոր վերլուծությունները մինչև լեզվական տարրական մասնիկների ,տարբերակումը հասցնելու հնարավորություն ստեղծվի և հող նախապատրաստվի գրաճանաչության ուսուցման համար: Սկզբում գաղափար է տրվում վանկի, ապա նաև բառի մեջ եղած հնչյունների մասին, իսկ ավելի ուշ երեխաներին պետք է սովորեցնել տարբերակել հնչյուններն ըստ արտասանության երկարության կամ ժամանակի, ըստ ձայնի և աղմուկի հարաբերության: Ըստ որում երեխաները պետք է կարողանան տարբերել երկար արտասանվող և շատ ձայն ունեցող ձայնավոր և կարճ արտասանվող ու քիչ ձայն ունեցող բաղաձայն հնչյունները,

դրանք արտահայտել գծային մոդելների վրա՝ սկզբում միայն ,հնչյունների քանակը իսկ ապա նաև տեսակը նշելով:

Ամբողջ վերլուծության շղթան նախադասությունից մինչև հնչյուն տանող հաջորդականաթյամբ այսպիսի պատկեր կունենա գծային մոդելով արտահայտելիս:

Գրելու ուսուցմանը երեխաներին նախապատրաստելը ևս կարևոր նշանակություն ունի գրաճանաչության ուսուցման համար: Գրաճանաչություն ասելով հասկանում ենք ոչ միայն հնչյունների գիտակցումն ու դրանց համապատասխան տառերի ճանաչումը, այլև,սովորած տառերը գրելը այսինքն՝ լսած հնչյունն իր համապատասխան տառով նշանագրելը տառերը համադրելով բառեր ու նախադասություններ ստանալը:

Գրելու աշխատանքին վարժեցնելու համար ամենից առաջ պետք է զարգացնել աջ ձեռքի դաստակի ու մատների մանր մկանային համակարգը: Առանց դրա երեխան ի վիճակի չի լինի գրելու համար ,անհրաժեշտ նուրբ ու չափավորված շարժումներ կատարելու ձեռքի մկանները չեն կարողանա զգայական գրգիռների միջոցով ուղեղի հաղորդած տեսողական պատկերները նույնությամբ վերարտադրել՝ պահպանելով առաջադրված պատկերների նմանությունը,համաչափությունը, թեքությունն ու գեղեցկությունը: Գրելու աշխատանքին նախապատրաստվելը ընդհանրապես լսողական, լեզվաշարժողական, տեսողական և մկանահոդային կինեսթետիկ ասոցիացիաների մշակման աշխատանքի նախապատրաստում է, որպիսին ըստ էության մարդկային խոսքն է թե՛ բանավորը, և թե՛գրավորը:

Երեխայի ձեռքը գրելուն նախապատրաստելու համար մի շարք աշխատանքներ պետք է կատարել, որոնց գումարը կտա այն, ինչին մենք ձգտում ենք: Դրանք են մկանահոդային վարժությունները, որոնք կարելի է անցկացնել թե՛ դասից դուրս՝ ֆիզկուլտուրայի պարապմունքների ու ֆիզկուլտ դադարների ընթացքում, և թե՛ գրավորի դասերին՝ գրելու ,աշխատանքից առաջ գրելու ընթացքում անցկացվող կարճատև դադարների ընթացքում: Բացառիկ կարևոր նշանակություն ունեն պատկերների գունավորման վարժությունները ,որոնք հնարավորության են տալիս գրիչը բռնել սովորեցնել, մատիտով աշխատել գունավորման , սահմաններն ու չափերը պահել ,գույները տարբերել երեխաների մեջ գունազգացողություն զարգացնել: Այժմ այդ նպատակով հատուկ տետրեր կան ստեղծված, որոնք սյուժետային գծանկարներ են պարունակում և երեխաները գունավորելուց հետո պատմում են դրանց բովանդակությունը: Կարևոր է նաև պարզ պատկերների մանրագծումն,

նրբագծումը, որը զարգացնում է աչքաչափը սահմանի ու հեռավորության համաչափության ու նմանության ուղղության ու զուգահեռության զգացողությունը: Տարբեր ուղղությամբ տարվող նրբագծերն ու մանրագծերը հնարավորություն են տալիս տիրապետելու ձեռքի շարժումներին, դրանք դարձնելու նուրբ ու չափավորված: Նույնքան արժեքավոր է նաև պարզ պատկերների նկարումը, որն ավելի բարդ աշխատանք է և պահանջում է ավելի մեծ լարվածություն, պատկերելու կարողություն և գրիչին տիրապետելու վարժվածություն: Շրջապատի պարզ առարկաների գծագրումը երեխաներին մեծ հաճույք է պատճառում և շատ օգտակար աշխատանք է: Այս բոլորը նախապատրաստում են գրելու ուսուցումը, որի համար անցման աստիճան են հանդիսանում գրելու նախավարժությունները, որոնք քառակուսի եռանկյունի կիսաշրջանաձև և ոլորվող պատկերներ են կամ պատկերների շարքեր՝ նման եզրանախշերի: Սրանց գրելը դեռևս նկարելու կամ գծագրելու տարրեր ունի և հող է ստեղծում տառամասնիկների գրությանն անցնելու համար:

Տառամասնիկներն արդեն մեր տառերի գրության չորս տեղագրություններին համապատասխանող չորս տարբեր չափերի,տեսակի տարրեր մասնիկներ են, որոնք մասնակցում են մեր բոլոր տառերի ձևավորմանը: Այս աշխատանքի կատարումն արդեն մոտենում է գրելու գործողությանը՝ թե՛ վարժությունների բնույթով, և թե՛ նյութական տեսակետից ,հող է նախապատրաստում դրա համար:

Կարդալու նախապատրաստումը ևս կարևոր աշխատանքներից մեկն է և այս շրջանին առանձնահատուկ: Մինչև վերջերս կարդալու ալգորիթմի ձևավորմանն անդրադառնում էին միայն այբբենական շրջանում, երբ առաջին խումբ տառերի ուսուցումից հետո հնարավոր էր լինում դրանցից բառեր կազմել ու կարդալ: Սակայն այժմ կարդալու մտավոր գործողությանը երեխաներին պետք է վարժեցնել դեռևս նախապատրաստական շրջանում՝ հիմք ունենալով բառերի գծային մոդելներն ու վանկային կորերը: Այդ աշխատանքը կարելի է տանել հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող միավանկ ու տարբեր վանկային կառուցվածք ունեցող բառերի գծային մոդելների վրա ,վերլուծական ու համադրական աշխատանք կատարելով, որը նախապատրաստական շրջանում տարվող լեզվական աշխատանքի հիմնական բովանդակությունը պետք է կազմի: Հասկանալի է, որ հնչույթավանկային մեթոդով պարապելիս հիմնականամ վերցվում են երկվանկ բառեր և ուշադրություն է դարձվում վանկերով կարդալու ալգորիթմի մշակմանը, իսկ հնչույթաբառային մեթոդով պարապելիս ավելի շատ վերցվում են միավանկ և ապա նոր երկվանկ բառեր և

ուշադրություն է դարձվում ամբողջական բառերով կարդալու ալգորիթմի ձևավորման վրա: Այս դեպքում եթե ընթերցվող բառը բազմավանկ է և երեխաներն այն կարդում են վանկերով , ապա անպայման վերջնական աստիճանը պետք է համարվի վանկերի ամբողջացումը բառի մեջ և բառի ամբողջական ընթերցումը:

Առաջադրված բառերի գծապատկերները կազմելը, կամ պատրաստի մոդելներին համապատասխանող բառեր գտնելը, դրանց հնչյունային ու վանկային կառուցվածքը գիտակցելը այդ բառերն ըստ առաջադրված կամ նոր կազմված մոդելի կարդալը, երեխաների մեջ մշակում է բառերի վանկային սահմանագիծն զգալու և ըստ այդմ բառը վանկերով կամ ամբողջական ձևով կարդալու կարողություն: Այս կարողությունը հետագայում մշակվում ու կատարելագործվում է տառային հիմքով կատարվող ,վարժությունների ընթացքում սակայն կարդալու սկզբնական կարողության ձևավորման հիմքը դրվում է այս շրջանում:

Կազմակերպչական խնդիրներն են

- Երեխաների ծանոթացումը նրանց համար նոր, ուսումնական գործունեությանը:
- Հարմարեցում ուսումնական գործունեությանը՝ ադապտացիա:

Ուսումնական խնդիրները բխում են առանձին վերցրած յուրաքանչյուր երեխայի պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունից:

Ուսուցիչը պիտի պարզի յուրաքանչյուր աշակերտի՝

- խոսելու բացատրելու հարցեր տալու ընկերներին և ուսուցչին լսելու, հասկանալու ուսուցչի հանձնարարությունները կատարելու ընկերների և ուսուցչի հետ հաղորդակցվելու ունակությունների մակարդակը:
- հնչյունային լսողության մակարդակն ու հայերենի հնչյունները ճիշտ ,արտասանելու կարողությունը:
- Բանավոր կապակցված խոսքը :
- խոսքի շարահյուսական կառույցը:

ԳԼՈՒԽ 2

Գրաճանաչության նախապայբբենական շրջանի կազմակերպման դժվարությունները

Գրելու գործընթացը, անշուշտ, որպես մտավոր գործունեություն շատ ավելի բարդ աշխատանք է, քան կարդալը: Գրավոր խոսքի հմտություններն սկսում են կազմավորվել դեռևս գրաճանաչության նախայբբենական շրջանում և հետագա ուսումնառության ամբողջ ընթացքում շարունակվում են հղկվել ու կատարելագործվել: Այդ աշխատատար գործընթացը երեխաներից պահանջում է մտավոր, ֆիզիկական ունակություններ հատուկ ճիգերի, գործադրում, գրելու տեխնիկական հմտություններ, հուզական, կայունություն կամքի մղում գրելիքի նյութական բովանդակության, մտապահում գրելուն զուգահեռ ընթացող լուռ ընթերցում, հնչյուններին ,համապատասխանող տառերի ձևերի պատկերացում տվյալ տառերը գծող կամ ձևավորող գրամոտորային, շարժումների պատկերացում ինչպես նաև այս բոլոր բաղադրիչների աստիճանական միավորում ու ավտոմատացում: Այդ է պատճառը, որ գրելու գործընթացը կազմակերպելիս ուսուցիչը պետք է հստակ պատկերացնի դրա նպատակն ու խնդիրները, ինչպես նաև հաշվի առնի երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Վեց տարեկան երեխաներով համալրված դասարաններում գրելու ուսուցման գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է իմանալ մի շարք առանձնահատկություններ:

Ուսուցչի հիմնական խնդիրն է՝ երեխայի մեջ մշակել սովորելու կարողություն , որից էլ բխում է գրելու սուսուցման գործընթացի սկզբունքային առանձնահատկությունը: Առաջնահերթ նշանակություն.պետք է տրվի հետևյալ կարողությունների զարգացմանը.

- Գրելու ընթացքում ուշադրության կենտրոնացում:
- Անհրաժեշտ գործողությունների իրականացում՝ ըստ տրված հաջորդականության:
- Սեփական գործողությունների պլանավորում, վերահսկում և նկարագրում:
- Աշխատանքի կատարման ճշտության ինքնաստուգում և գնահատում :

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը պետք է հրավիրի ոչ միայն այն խնդրին թե ի՛նչ է անհրաժեշտ գրել, այլև՝ ինչպե՛ս գրել: Սա ոչ միայն անսովոր, այլև դժվարին պահանջ է վեց տարեկան երեխայի,համար սակայն գործողությունների հստակ պլանավորումը կնպաստի այդ դժվարության հաղթահարմանը: Կարևոր է նաև, որ երեխաները ուսուցչի հսկողությամբ կարողանան նկարագրել գործողությունների հաջորդականությունը և խստորեն պահպանեն այն: Բավական բարդ գործընթաց է երեխային ինքնավերահսկման կարողության ուսուցումը: Կարևոր է նաև, որ աշակերտները սովորեն քննադատորեն նայել իրենց գրածին, նկատեն նույնիսկ ամենափոքր անճշտությունները :

Գրաճանաչության նախայբբենական շրջանի մի շարք կարևոր խնդիրներից է նաև գրելու նախապատրաստումը: Այդ աշխատանքներն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ դպրոցին ամենատարբեր պատրաստվածության մակարդակ ունեցող երեխաները հաջողությամբ յուրացնեն գրելու տեխնիկական հմտությունները: Գրելու ուսուցման հիմնական գործընթացը ենթադրում է նաև ուսումնաշտկողական ,հետևողական աշխատանք ,որն ուղղված է՝

- Երեխայի մատների մանր նրբաշարժումների ամրացմանն ու զարգացմանը,
- Ձեռքի դաստակի մարզմանը
- Տեսողական հիշողության զարգացմանը
- Գրելու ժամանակ հիգիենայի կանոնների կարևորության գիտակցմանն ու դրանց պահպանման ունակության մշակմանը:
- Տետրի մեջ կողմնորոշվելու կարողության մշակմանը:
- Ուրվագծերով տրված նկարների գունավորման աշխատանքների կատարմանը՝առանց եզրագծերն անցնելու
- Ձախից աջ գրության ապահովմանը
- Հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակմանը:

Ահա այս հիմնական խնդիրներ, որոնք պետք է իրականացնել գրաճանաչության նախայբբենական շրջանում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները:

Այս խնդիրների լուծման նպատակով կիրառվում են տարաբնույթ վարժություններ, խաղեր, առաջադրանքներ, նկարչությունից ծեփոնով զբաղվել, ապլիկացիայից և մատների մանր ֆալանգների ամրացման դաստակի մարզման վարժություններից :

Այդ իսկ պատճառով երեխաներին պետք է առաջարկել գունավորել նախ մեծ ,ապա՝ փոքր պատկերներ, մշակել ձեռքի՝ ձախից աջ գնացող շարժումներով գունավորում առանց տետրը շարժելու մեկ ուղղությամբ ,ներկելու ունակություն սովորեցնել մատիտը ճիշտ բռնել, նկարչական տետրը սեղանին դնել 45 աստիճան թեքությամբ և պահպանել տետրից աչք ընկած հեռավորությունը:

Քանի որ երեխաները գրել են սովորելու ,ամբողջական տառերով ապա տառամասնիկներն ուսուցանելիս պետք է նկատի ,ունենալ որ այդ գործընթացը լոկ գրելու նախապատրաստում է

Լուծելով վերը նշված խնդիրները՝ ուսուցիչը հնարավորություն ունի այբբենական շրջանում ուսումնական գործընթացն այնպես կառուցել, որ բոլոր երեխաները հաջողակ լինեն՝ առանց նրանց նյարդային համակարգը լարելու:

Գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները ,որոնք վերաբերում են գրելու ուսուցման գործընթացին հետևյալն են:

- ,Զարգացնել և ամրակայել գրենական պիտույքներից օգտվելու, տետրում կողմնորոշվելու կարողությունները:
- Շարունակել ամրակայել երեխաների ոսկրամկանային համակարգը:
- Մշակել տառամասնիկներն ամբողջական ընկալելու և դրանք տետրում տրված օրինակի համաձայն վերարտադրելու կարողություններ:
- Իրականացնել վանկերի բառերի բառակապակցությունների գրուսուցումը վայելչագրության կանոնների համապատասխան:
- Մշակել տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու կարողություն:Սովորեցնել գրել մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն և գրածի իմաստը հասկանալու կարողություն:
- Մշակել գրության և արտասանության տարբերություն չունեցող բառերն արտագրելու և թելադրությամբ գրելու կարողություն:

- Սովորեցնել հնչյունատառային վերլուծությունից հետո գրառել բառեր և նախադասություններ:
- Գրի առնել ինքնուրույն կազմած նախադասությունները (3-4 բառից կազմված):

Անհրաժեշտ է իմանալ, որ գրելու գործընթացն ունի 2 կողմ՝ բովանդակային և տեխնիկական:

Բովանդակային կողմը վերաբերում է կատարվող գրավոր աշխատանքի բովանդակությանը, իսկ տեխնիկականը՝ անմիջականորեն առնչվում է յուրաքանչյուր առանձին վերցրած տառի գրաֆիկական պատկերին և նրա՝ մյուս տառերի հետ ,ունեցած կապին բառերի ճիշտ գրությանը և նախադասություններ գրելիս նրանց տեղին:

Շատ կարևոր հանգամանք է այն, որ ուսուցիչը աշակերտների գիտակցությանը հասցնի այն ճշմարտությունը, որ գեղեցիկ և գրագետ գրելը և տետրի կոկիկ ու վայելուչ վարումը նպաստում է ինքնատիրապետման ,կարգապահության, զսպվածության, կոկիկության, կազմակերպվածության և այլ անձնային որակների ձևավորմանը:

Ուսուցիչը սակայն իր հերթին պիտի հաշվի առնի, որ գրելը խոսքային .գործունեության ամենաբարձր տեսակն է երեխայի անհատականության հետ, խստորեն կապված գործընթաց է և, որ գրելու կարողությունները ձևավորվում են դանդաղ՝ երեխայից խլելով մտավոր, ֆիզիկական և հոգեկան մեծ ջանքեր:

Հարկ է նշել, որ գրուսուցման բոլոր փուլերում պետք է հենվել ,ուսուցման որոշակի սկզբունքների վրա՝ զննականություն, գիտակցականություն, աստիճանականություն երեխաների անհատական առանձնահատկությունների հաշվառում, կարդալու և գրելու համատեղ ուսուցում: Չմոռանանք նաև, որ գրաճանաչության շրջանի կարևորագույն խնդիրը երեխաներին հասկանալով, սահուն, արտահայտիչ կարդալ, գիտակցաբար գրագետ և վայելուչ գրել սովորեցնելն է և տվյալ տարիքի երեխաների ունակություններին համապատասխան բանավոր և գրավոր խոսք կառուցելը: Գրուսուցման կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ արագ գրելու կարողությունը խիստ անհատական է և չի կարելի այն պարտադրել բոլորին:

ԳԼՈՒԽ 3

Հնչյունային մեթոդի պատմական հիմքերը և արդի պրակտիկան

Կրտսեր դպրոցականներևին գրաճանաչ դարձնելու և կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացում մշտապես կարևորվել են այբուբենի գրաֆիկական առանձնահատկությունները: Ուշագրավ է և տրամաբանական, որ գրաֆիկան, որպես գիտության ինքնուրույն բաժին, ձևավորվել է շատ ավելի ուշ, քան ծագել է մարդկանց կարդալու ցանկությունը: Այս պատճառով՝ գրաճանաչության մեթոդիկայի գիտական սկզբունքների, այդ թվում՝ կարդալու տարրական կարողության ձևավորման համար նախատեսված տառատեսակի ընտրության տեսական հիմնավորումը երկար ժամանակ ձևավորվում էր տարերայնորեն, հաճախ երեխաներին գրաճանաչ դարձնող առանձին անհատների ուժերով, անգամ նրանց ձեռագրի տեսակով: Ծնողները կարող են նպաստել երեխայի խոսքի զարգացմանը՝ բառերը ճիշտ արտասանելով, երեխայի սխալ արտասանություններն ուղղելով: Դպրոց գնալուց առաջ երեխան պիտի տիրապետի բանավոր խոսքին՝ ճիշտ արտասանի իրեն ծանոթ բառերը, ազատ և անկաշկանդ խոսի, ըստ անհրաժեշտության բարձր կամ ցածր՝ սեփական մտքերն արտահայտել կարողանա, հեքիաթների ու պատմությունների մասին հարցերին պատասխանի, հարցեր տա և այլն:

Գրաճանաչության մեթոդիկայի հիմքը նախապես եղել է տառը: Այդ է պատճառը, որ պատմության ընթացքում գերակշռել են գրաճանաչ դարձնելու տառային մեթոդները: Դրանք լուրջ ձեռքբերումներ են եղել, որոնք այսօր գիտության մեջ դիտարկվում են որպես պատմական նվաճումներ, թեև գրաճանաչության արդի մեթոդիկայում կիրառվող բազմաթիվ հնարներ վերցված են հենց այդ ակունքներից: Մեթոդական այս սկզբունքը մասնավորապես կիրառվում է Սփյուռքում՝ պայմանավորված արևմտահայերենի հնչյունաբանության առանձնահատկություններով: Հայ իրականության մեջ գրաճանաչության գործընթացում հնչյունն ընդունվեց որպես հիմք, և գերիշխեց հնչյունային մեթոդը:

Հնչյունային կամ հնչական մեթոդը փոխանցվեց մանկավարժական մտքի պատմության փուլերով՝ հաճախ մերժվելով կամ ձևափոխվելով, և բյուրեղացվեց Մ. Մաշտոցի գործը շարունակողների կողմից ու հասավ մինչև Ղազարոս Աղայան:

19- րդ դարում գիտակցվեց մաշտոցյան այբուբենի հնչյունային լինելու առավելությունն ու արժեքը և գրաճանաչության գիտական որոշակի սկզբունքների հերթագայությամբ՝

վերջնականապես ընդունվեց հնչյունային մեթոդը: Այն Աղայանի շնորհիվ կատարելագործվեց, գիտականորեն հիմնավորվեց, հրատարակված այբբենարանների միջոցով փոխանցվեց և հաստատապես մտավ հայ դպրոց: Այսօր էլ մասնագիտական գրականության մեջ այն անվանվում է Աղայանի մեթոդ:

Այբբենարանագիտության մեջ լուրջ ներդրում ունեցավ պրոֆեսոր՝ Ա. Տեր- Գրիգորյանը, ով ամփոփեց ու ստեղծագործաբար վերամշակեց հնչյունային մեթոդն ու դրա գործադրման հնարները՝ դիտարկելով նաև գրաճանաչության գործընթացի ինքնատիպությունը, արդյունքներն ու այլ մեթոդների նկատմամբ վերլուծական- համադրականի առավելությունները: Հնչյունային վերլուծական-համադրական մեթոդով աշխատելիս շատ ժամանակ է տրամադրվում հնչյունների շուրջ տարվող աշխատանքին՝ մեծ ջանքեր և եռանդ պահանջելով և՛ ուսուցչից, և՛ աշակերտից:

Հնչյունային մեթոդի կիրառման դեպքում գործընթացն իրականացվում է հետևյալ քայլերով.

- Հնչող խոսքի ունկնդրում և վերարտադրում,
- Խոսքից բառի առանձնացում, արտասանում ,
- Արտասանած բառի վանկային, ապա հնչյունային վերլուծություն,
- Բառի մեջ մտնող առանձին հնչյունների արտաբերում, արտաբերման նրբությունների քննարկում,
- Հնչյունի պատկերի՝ տառի դիտարկում,
- Նորածանոթ և ծանոթ տառերի համադրում, տառակապակցությունների և բառերի կազմում ընթերցում:

Բառի գիտակցումը և տառապատկերի գրառումը վերը նշված աշխատանքային
քայլերի օրինաչափ ավարտն է: Հնչվող խոսքի դիտարկման ճանապարհով գրաճանաչության գործընթացը խարսխվում է երեխաների խոսքային կարողությունների վրա, երեխաները դպրոց գալու պահին արդեն տիրապետում են բանավոր խոսքի մի շարք առանձնահատկությունների:

Ուսումնական գործունեության ընթացքում ամենակարևոր խնդիրներից մեկը սովորողների խոսքի զարգացումն է, հաղորդակցվելու կարողության ձևավորումը, քանի որ մարդու

հիմնական յուրահատկություններից մեկը հաղորդակցվելու ընդունակությունն է. խոսքի միջոցով են իրագործվում բարձրագույն հոգեկան գիտակցական գործընթացներն ու շփման առավել կատարյալ, սոցիալական տեսակետից անհրաժեշտ ձևերը: Ուսումնական գործունեությունը բարդ ու բազմակողմանի գործընթաց է, և այն առավել արդյունավետ իրականացնելու համար հարկավոր է ճիշտ կազմակերպված աշխատանք, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սովորողը գիտելիքների ձեռքբերմանը զուգահեռ ստանում է իր կյանքի հետագա գործունեության համար անհրաժեշտ սոցիալական փորձ: Ուսումնառության ընթացքում իրականացվում է երեխայի հոգեկանի զարգացումը, ձեռք է բերվում գիտելիք, մշակվում այլընտրանքային ճանապարհով գիտելիքների ձեռքբերման կարողություն, ձևավորվում ճանաչողական ընդունակություններ, մարդկանց և իր նկատմամբ սեփական վերաբերմունքի դրսևորում: Կրթության հետ միաժամանակ երեխան պետք է դառնա նախաձեռնող, կարողանա ինքնուրույն հետազոտել, ստեղծագործել, ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում, փոխանցել իր իմացածը, ձեռք բերել հաղորդակցական, համագործակցային կարողություններ և ինքնուրույնություն: Կրտսեր դպրոցական տարիքը գիտելիքների կուտակման տարիք է, և այս տարիքի երեխաները պատրաստակամ են գիտելիքներ ձեռք բերելու հարցում: Ուսուցման հիմքը դրվում է ուսումնառության սկզբնական շրջանում և այնուհետև շարունակվում դպրոցական ողջ տարիների ընթացքում, և ոչ միայն:

Նոր դպրոց մտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման մի շարք խնդիրներ՝ հնչյունների ուղղագրությունն ու ուղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապա նախադասություն կառուցելու կարողությունը, բառ իմաստի ընկալման, ճիշտ կիրառման և պատկերավոր խոսք կառուցելու կարողությունը: Ամրապնդման համար համապատասխանաբար կատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ: Սկսած նախաայբբենական շրջանից՝ աշակերտներին գաղափար է տրվում բանավոր և գրավոր խոսքի մասին, պատումի, նախադասության մասին, զարգացվում նրանց տեսողական-պատկերային մտածողությունը, ձևավորվում մտքերը հասկանալի և ճիշտ ձևակերպելու, հաղորդակցվելու, ինքնարտահայտվելու կարողություններ: Ուսուցման ընթացքում ուսուցիչը կրտսեր դպրոցականների առջև խնդիր է դնում իր կողմից առաջադրվող հարցերին տալ լիարժեք և

տրամաբանված պատասխաններ, խոսել ճիշտ ու գրագետ, խուսափել անհարկի կրկնություններից: Հատկապես ուշադրություն պետք է դարձնել, որ աշակերտը ազատ և անկաշկանդ մտածի և հաղորդակցվի, կարողանա հասկանալ տրված հարցերը և ճշգրիտ պատասխանել դրանց, կարողանա ճիշտ կողմնորոշվել խոսքային իրադրության մեջ: Երեխային առաջարկում ենք պատմել իր, ընտանիքի, ընկերների, սիրելի իրի և այլ առարկաների կամ երևույթների մասին, սովորեցնում համեմատել և գտնել առարկաների նմանություններն ու տարբերությունները և այլն, ձևավորում ենք դիմացինի խոսքը լսելու կարողություն: Աշխարհաճանաչողական տեղեկությունների միջոցով զարգացնում ենք խոսքն ու մտածողությունը, նոր բառերի միջոցով հարստացնում բառապաշարը, այն մաքրում ժարգոնային, բարբառային բառերից: Արդեն ավագ նախադպրոցական շրջանում աշխատանքներ են տարվում խոսքի, բառի, նախադասության և տեքստի շուրջ, գործնականում կիրառում լեզվական նախնական գիտելիքները: Օրինակ՝ բառի մասին գաղափար կազմելու համար երեխաներին հարցնում ենք, թե ինչ են տեսնում իրենց շրջապատում, աշակերտները սկսում են անվանել տարբեր առարկաներ, այնուհետև հարցնում ենք, թե ինչպես են տարբերում այդ առարկաները, աշակերտները անվանում են առարկաների տարբեր հատկանիշներ, բնութագրում են դրանք, ասում, թե որ առարկան ինչի համար է: Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով՝ գրուսուցման ժամանակակից մեթոդի, 6-7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների, այբբենարանի կառուցվածքի ու բովանդակության, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման, երեխաների համակողմանի դաստիրակության խնդիրների ընդգրկումով: Այս առումով էլ գրաճանաչության մեթոդիկան հենվում է ժամանակակից մանկավարժության ու դիդակտիկայի, մանկավարժական հոգեբանության ու մարդաբանության, մայրենի լեզվի մեթոդիկայի հնչյունաբանության վրա, որոնք նրա տեսական հիմունքներն են կազմում՝ յուրաքանչյուրը յուրովի նպաստելով գրաճանաչության ուսուցման գիտական սկզբունքների մշակմանը: Հաշվի առնելով 5-6 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ վաղ գրաճանաչության ծրագրային խնդիրների լուծումն իրականացվում է բազմազան խաղերով, դիդակտիկ վարժություններով, հանելուկ-խնդիրներով, խաղ-վարժություններով, շուտասելուկներով:

Գրաճանաչության ուսուցումն ունի երկու շրջան՝ նախապատրաստական և բուն գրուսուցման: Նախապատրաստական շրջանում երեխաների խոսքի զարգացման

ուղղությամբ տարվող աշխատանքներում գլխավորը նրանց բառապաշարի ճշտման, հղկման ու հարստացման, ինչպես նաև կապակցված խոսք կառուցելու ունակության մշակումն ու զարգացումն է: Այս շրջանում հատուկ աշխատանք է տարվում նկարի, տեսածի, լսածի մասին կապակցված և ամբողջական ձևով պատմելու, խոսքից կամ պատմությունից նախադասությունն առանձնացնելու, նախադասությունը բառերի վերլուծելու, պահանջված բառն անջատելու, բառը վանկերի բաժանելու, վանկերը հնչյունների վերածելու և այդ հնչյունների շարքից անհրաժեշտ հնչյունն առանձնացնելու կարողությունները մշակելու ուղղությամբ: Երեխաներին գաղափար է տրվում նաև հնչյունի և տառի մասին (հնչյունը լսում ենք, արտասանում, տառը տեսնում ենք, կարդում ու գրում):

Վաղ գրաճանության նախապատրաստման գործընթացը զարգացնող դարձնելու հիմնական պահանջը երեխաների ուսումնական գործունեության ընթացքում՝ դա ինքնուրույն աշխատանքի ծավալումն է և սիմվոլիկ զննականության օգտագործումը: Գրաճանաչության նախապատրաստման հաջորդ սկզբունք դաստիարակող ուսուցման սկզբունքն է, որը դիդակտիկայում կիրառվող հիմնարար սկզբունքներից է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտական աշխատանքի շրջանակներում կատարած ուսումնասիրությունների արդյունքնում հանգել ենք .հետևյալ եզրակացությունների:

1. Եթե փորձենք ամփոփել աշակերտի դպրոցին պատրաստվածության հիմնահարցի վերաբերյալ խորհրդային հոգեբանների մոտեցումներն ու տեսակետերը, նրանց կատարած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքները, ապա առանձնացնում են դպրոցին պատրաստվածության հետևյալ բաղադրիչները.
   - անձնային պատրաստվածություն,
   - ինտելեկտուալ պատրաստվածություն,
   - սոցիալ-հոգեբանական պատրաստվածություն,
   - հուզակամային պատրաստվածություն:

Նշվածների զարգացվածության բավարար մակարդակն էլ ապահովում է հետագա ուսումնական գործունեության արդյունավետությունը և դրանով իսկ վկայում աշակերտի դպրոցական ուսուցման պատրաստվածության բարձր ցուցանիշների մասին:

2. Երեխայի փորձառության մեջ կա մի փուլ , որն սկսվում է այն ժամանակ, երբ երեխան առաջին անգամ տեսնում է գիրքը և զարմանում, թե մարդիկ ինչպես են օգտվում դրանից և ավարտվում է այն ժամանակ, երբ երեխան կարողանում է ինքնուրույն կարդալ բառերը:
3. Նախնական գրաճանաչությունը ենթադրում է, որ մինչև դպրոց գնալը երեխան պետք է.
   - Գաղափար ունենա տպագիր խոսքի մասին
   - Իմանա գրավոր խոսքի այբբենական բնույթի մասին
   - Իմանա որոշ ուղղագրական հասկացություններ
   - Կարողանա լսել, հասկանալ բանավոր խոսքը, հաղորդակցվել,վերարտադրել լսածը սեփական կարծիք հայտնել:
4. Այսօր անընդունելի է միայն պատմականորեն փորձարկված արդարացված ավանդական մեթոդների մի մասի կամ նրանցից ընտրված առանձին հնարների գործածումը այբբենարաններում և դասագործընթացում, առանց հաշվի առնելու

ժամանակակից կրթության առջև դրված նոր պահանջները, աշակերտակենտրոն անհատակողմնորոշված մոտեցումների փոխգործուն և ակտիվ մեթոդների համադրման անհրաժեշտությունը:

5. Գրաճանաչության գործընթացի արդյունավետությունը հիմնավորվում է դրա արդյունքում (ուսումնական տարվա ավարտին) աշակերտների ձեռք բերած կարդալու և գրելու, ծրագրով նախատեսված որոշակի մակարդակի առկայությամբ, որը հնարավոր է իրականացնել, եթե գրաճանաչության գործընթացում մեթոդապես ճիշտ կատարվեն գրել-կարդալու կարողությունների ձևավորման երեք փուլերը՝ հաշվի առնելով վաղ ուսուցման նպատակները, խնդիրները և 6 տարեկան սովորողների տարիքային առանձնահատկությունն երը:

6. Նկատի ունենալով ,որ գրաճանաչության, ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդները կիրառելի են և արդյունավետ նաև -երկհամակազմ դպրոցների սովորողներին գրել-կարդալ սովորեցնելու գործընթացում ուսուցման այս ձևի առանձնահատկությունները հաշվի առնելով անհրաժեշտ է ստեղծել նոր սկզբունքներով կազմված այբբենարան՝ նկատի ունենալով առաջին դասարանների համակազմի ոչ միայն տարիքային տարբերությունները այլև դրանցով պայմանավորված ճանաչողական հետաքրքրությունները և գիտելիքների ու կարողությունների տարամակարդակությունը :

Հետազոտության ընթացքում պարզեցինք, որ նախաայբբենական շրջանում առկա են մի շարք խնդիրներ, որոնք կապված են խոսքի զարգացման, հոգեկան զարգացման և մի շարք այլ գործոնների հետ:

Խնդիրների մեծ մասը առաջանում են դասարանում երեխաների մեծ թվաքանակի հետ, քանի որ ուսուցիչը չի հասցնում բոլորի հետ անհատապես երկար աշխատանք տանել

Երեխաների առանձնահատկությունների չիմացությունը ևս կարող է խնդիր հանդիսանալ գրաճանաչության կազմակերպման համար: Իմ կարծիքով հատկապես այս շրջանում խիստ կարևոր է համագործակցային ուսուցումը, կարևոր է հոգեբանների, ծնողների և ուսուցիչների համագործակցումը՝ նման խնդիրներից խուսափելու համար: Մեթոդական հնարների կիրառման պակասը կարող է ևս խնդիրներ առաջացնել, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մշտապես ինքնակրթվել, կատարելագործել հմտությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Տեր Գրիգորյան Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա Եր., 1980
2. Ա. Տեր Գրիգորյան Գրաճանաչության մեթոդիկա Եր. 1968
3. Ջ.Գյուլամիրյան Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա.Եր. 2006:
4. Ջ.Գյուլամիրյան Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում Եր1998
5. 1-Հ.Հ. Պետրոսյան Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները 2-րդ մաս Երևան 2007 թ.
6. «Ընթերցանության կարողությունների ձևավորում տարրական », , դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա Երևան2014
7. Ա. Տեր-Գրգորան «Խոսքի զարգացման մեթոդիկա»,